**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԾՁԲ-10/60 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2010 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ԾՁԲ-10/60 պայմանագրում 2018 թվականի փետրվարի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված N ԾՁԲ-10/60 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 12-րդ ենթակետ և Պայմանագրի 4.1.1 և 7.3 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10

## 06.09.2010թ. կնքված N ԾՁԲ-10/60 գնման պայմանագրի

ք. Երևան 16.02.2018թ.

<<ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բագարանի բարիք>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 06.09.2010թ. կնքված N ԾՁԲ-10/60 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կատարողի կողմից Պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 2018թ. ընթացքում մատուցման ենթակա ծառայությունների գինը սահմանել **1 586 000 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունվեց հազար)** ՀՀ դրամ՝ ներառյալ Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.2 Հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
<<ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
<<Կիլյան>> մասնաճյուղ
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628

Տնօրեն՝

_______________ Ս. Մարգարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
*06.09.2010թ. կնքված ծառայությունների մատուցման*
*N ԾՁԲ-10/60 գնման պայմանագրի*
*16.02.2018թ. կնքված N 1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
**(բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 06)**

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի մարզադպրոցի /նոր մասնաշենք/ կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն | - | - | 107 500 | 457 500 | 457 500 | 457 500 | 957 500 | 957 500 | 957 500 | 1 586 000 | 1 586 000 | 1 586 000 | 1 586 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012714, ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Բագարան
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
<<Կիլյան>> մասնաճյուղ
Հ/Հ 11500498836200
ՀՎՀՀ 02235628

Տնօրեն՝

_______________ Ս. Մարգարյան
(ստորագրություն)

Կ.Տ.